

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵԲԱՍԻՈՅ



Գիրավ. Անդրեաս Վ. Աղեքուսնդրեսուն ունի ընդ մամերվ վիճացս՝ մանրամասն պատումութիւն մը Սեբաստիոյ, անոր սահմանաց եւ արքայիսի կուպորութեան, ուսից յառաջ պիտի բերենք քանի մը կոտրներ՝ մեր ընծերողուց գալափար մը տալու համար գործոյն կարեւորութեան եւ ուսումնասիրական ոմն նկատմամբ։

ՆԱԽ ԽՄ ԸՐ ԳԻՏԵԼԻՔ

## ԳԼՈՒԽ Ա.

ՆԱԽ ԱԽ ԸՐ ԳԻՏԵԼԻՔ

Այս գլուխու մէջ պիտոր բովանդակին Փոքր Հայոց անուան, զրից, քածանման և բնակչաց վերաբերեալ զիտելիներն, որոնց կարեւոր են պատմութիւնը լուսաւորելու համար։

Անոն և Դիրք

Մեր հին պատմազրաց բով « Փոքր Հայոց » բառը չէ արտասանուած. Նաև մեր պատմազրաց Հայոց Մովսէս Խորենացի՝ Հայոց այս մասը կ'անուանէ « Ալրեմտեան մեր կողմն ». Կը գրէ. ևս որ Արամ Նահապետ Հայոց՝ այս կողմերու տիրելով աշխարհակալութեամբ՝ իր տէրութեան մասն կազմած էր, և ասոնք են ծեր պատմազրին խօսքերը. « Արամ հասանէ ի « կողմանն կապազովկացւոց ի տեղի մի « որ այժմ ասի կեսարիսա... Պատահէ նմա « Պայազիս Փաղեայ Ցիտանեան, որ բըռ « նացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց « մեծամեծաց՝ զՊոնդուն և զմլէկիանու « (Միջերկրականին), որում ի դիմի հաւ « բեալ գանէ, փախստական առնելով ի « կզզի ինչ ասիական ծովուն, իւ ինըն « թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւր « մէ, և բիւր մի ի զօրաց իւրոց ի վե-

« րայ աշխարհին, և ինքն դառնայ ի հայս : « Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին « ուսանել զիսօս և զլեցու հայկական . « վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի « անուանեն զկլիմայն զայն՝ Պռոտին Առ « մենիան, որ թարգմանի՝ Առաջին Հայր : « Եւ զդաստակերան, զոր շինեաց յաւ « նուն իւր Մշակ կողմատիսն Աղաւ « մայ՝ փոքրագունիւց պարսպեալ որմովք, « անուանէին հինգ աշխարհին՝ Մաժաք, « այսպէս ոչ կարելով ուզգախոսել, մին « չև յետոյ յոմանց ընդարձակագոյն շիւ « նեալ՝ անուանեցաւ կեսարիս : Բայտ նր « մին օրինակի ի տեղեացն այնոցիկ ցրոն « իւր սահմանն զրազում անրնակ երկիր « ելից բնակչօր, որը Երկրորդ և Երրորդ « անուանեցան Հայր, այլ և Չորրորդ : « Այս է առաջին և ճշմարիտ պատճառ « վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն՝ « Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և « Չորրորդ Հայր : Խակ որ այլ յոմանց ասի « ի յունական կողմանսն մեզ ոչ է հաճոյ », Խորենացւոյն կը հետեւին մեր հին պատմազրիներէն ուրիշներն ես, քանի մը պարագաներու տարրերութեամբ :

Խորենացին ըսելով՝ մեզ ոչ է հաճոյ, յայսնի կը ցուցնէ, թէ անտեղեակ չէր անոնց այս անուանակոչութեանց տուած պատճառներուն, բայց բածներնին հաճելի չերենալով, և ոչ զանոնց մէջ բերել յարմար դատեր է :

Իրօց անծանօթ չէր արտաքին պատմազրաց Հայոց աշխարհին՝ այս պայմանը կամ անուանակոչութիւնն, այլ անոնց քով չընձայուիր ան Կահապետին Հայոց Արամայ : Այս արկեմտեան Հայաստանի նկատմամբ հիմ մը կը գտնուի Աստուածաշունչ զրոց մէջ Պաւուզայ և Դավթի ժամանակ, որ խօսց Կըլլայ Նոփաց աշխարհին վրայ, իրը առանձին պետութիւն՝ որուն վրայ ետքէն : Նա և Դարեհ վշտասպեանի ժամանակ, որ թագաւորեց Քրիստոսէ 522-486 տարի առաջ, կը գտնուի յիշատակ Հայաստանի արկեմտեան և արկեմտեան մաս ունենալուն : Քանիովոն յունական բիւր զօրաց նահանջին պատմութեան մէջ կը

յիշատակէ արևմտհան Հայաստանի Աստ-  
րապը կամ Նախարարը Տրիբաղ, որ Պար-  
սից արքունեաց մէջ մեծ դիրք և պատիւ  
ունէր:

Մինչև հոս խօսքն է՝ թէ Հայոց աշ-  
խարհն երկու գլխաւոր մաս ունէր, ա-  
ռեւել և արեւուց: Իսկ Մեծ և Փոքր  
Հայոց անուանակոչութիւնն սկսած կը հա-  
մարին արտաքին պատմից այն բաժա-  
նումէն, որոր ըրաւ Միեն Անտիոքոս որ  
թագաւորեց 223-187 տարի Քրիստոսէ  
առաջ, և երկու մասանց կարգեց երկու  
նախարար. Արտաքիան կամ Արտաշէն  
արեւեան կողմին, և Զարիատրէն կամ  
Զատրիատէն, այն է Զարեն կամ Դաբէն, ա-  
րևմտեան կողմին: Եւ որովհետեւ Արտա-  
շէսի բաժննն սաւելի մեծ էր, անոր համար  
կոչուեցաւ Միեն Հայը. իսկ Զարենի բաժննն  
Փոքր Հայը, ինչու որ չունէր միւսին տա-  
րածութիւնը:

Ասկէց առաջ եկած է արտաքին պատ-  
մազրաց մեր երկրին տուած Միեն և Փոքր  
Հայը անուանակոչութիւնը, թէպէտ ոչ  
միշտ նոյն սահմաններով և նոյն տարա-  
ծութիւնը:

Խոկ մեր պատմազրաց մէջ՝ արևելեան  
մասին Միեն Հայը յորջորդումը միշտ ի  
գործածութեան էր. հետևարար պէտք էր  
արևմտեան մասն ևս կոչել Փոքր Հայը,  
որ հին մատենազրաց մէջ բաւական զա-  
տուեր է ըսել «Արևմտեան մեր կողմ»:

Խոկ Փոքր Հայոց դիրքն է Փոքր-Ասիսոյ  
Արևելեան վերջին մասը՝ մինչև Միեն Հա-  
յոց արևմտեան սահմանը: Տարածութեան  
համար Մովսէս Խորենացի կ'ըսէ. «զմի-  
ջոց երկուց ծովոց մեծամեծաց, զՊոնդուն  
և զՊվիքանու»: Որով Փոքր Հայըը կ'յ-  
նար Փարիզի երկայնութեան  $33^{\circ}$ - $38^{\circ}$  և  
լայնութեան  $36^{\circ}$ - $41^{\circ}$  աստիճանաց ներքեւ:  
Բայց ումանց ասի շատ ընդարձակ երեւ-  
նալով՝ կ'ամփոփեն Ա, Բ և Գ Հայը ա-  
նուանեալ զաւաներով միայն. երկայնու-  
թեան  $33^{\circ}$ - $36^{\circ}$ ,  $30'$ . և լայնութեան  $37^{\circ}$ ,  
 $30'$  -  $40^{\circ}$ ,  $30'$  աստիճանաց ներքեւ բա-  
ւական ընդարձակ երկիր մը:

Այս երկրորդ տեսութեամբ Պոնտական

ծովէն և Միջներկրականէն հեռանալով՝ կը  
մնայ Փոքր-Ասիսոյ արևելեան միջնաշխար-  
հեն, որ մեր նախնից Միջներկրեայ կ'ա-  
նուանէն. և յիշեալ երկու ծովերէն որ-  
չափ հեռանայ, այնչափ կը նուազին ան-  
տապահիս տեղերը. բայց ընդ հակառակն  
հովիտները կ'ընդորձակին լայն զաշտե-  
րով. իսկ լեռները թէպէտ լերկ են, այլ  
զանազան գյոներով զարդարուած ակնա-  
հանոյ կերպարանը մը կ'ընծայեն աչաց,  
մէկ լեռն վրայ հինգ վեց գոյն վրայէ  
վրայ շարուած տեսնելով. բայց վերջապէս  
Փոքր Հայաստան բուրովին զորկ չէ ան-  
տառներէն: Այս երկրը Փոքր-Ասիսոյ բար-  
ձրագոյն մասն է: Արգէու լեռնէն, որ  
4000 մեղր բարձր է, մինչև Գոհանամ լեռը  
ծգուած լեռանց զիծ մը կը բաժնէ Փոքր  
Հայըը երկու մասի, հիւսիսային և հարա-  
ւային, որոնց կրնան կոչուիլ, հովիտ Սև  
ծովոն՝ հիւսիսայինն, իսկ հարաւայինը  
պէտք է կոչել Միջներկրականի և Եփրա-  
տայ հովիտներ: Չըերն ևս նոյն լեռանց  
գծէն վեր կ'երթեան կը թափին Սեաւ ծով.  
բայց միշտ արևելքն արևմտուց ոլոր մո-  
լոր շրջան մ'ընելով, կը զառնան ապա  
զէպ ի հիւսիս մինչև Սեաւ ծով, ինչպէս  
են Ալիս, Խրիս և ուրիշներ: Կոյն գծէն դէպ  
հարար կ'իջնեն Ար (Աէցուն) և Փիւրամ  
(Ճիհնան) գետերն իրենց ալրաննեակներովն,  
և ուրիշներ՝ դէպ ի Միջներկրականը: Ե-  
փրատ թափող գետերն ու գետակներն ա-  
ւելի փոքր են, բայց բազմաթիւ. անոնց  
մէջ նշանաւոր է Մելոս (Քարասոտ) գետն,  
որ Մեծիրան (Կէզօվտէլի) լեռնէն կ'ելլէ և  
Մելիտինոյ մօտերէն կ'անցնի մինչև Ե-  
փրատ:

Երկու ծովերէն հեռանալով, երկրին  
բարձրանալուն համեմատ կլիման կը փո-  
խուի. տեղ տեղ, ի մասնաւորի Սերաստիա,  
ցրտութիւնը մեծ է. այլ օդը մաքուը և  
չորս Շուրջը եղած զաւաներն, ի մաս-  
նաւորի Եւոկիիա, թէպէտ խոնաւ է, բայց  
բազմաթեղուն: Ընդհանրապէս Փոքր Հայը  
ամառը շատ չերմ է, որով հունձերը  
կ'երագեն, մանաւանդ գարնան ցանը: Այս  
մասին վրայ արդէն երկայն զրած ըլլա-

լով, ուրիշ պատմութեան մը մէջ, հոս բաւական կը համարիմ այսչափս համառուսակի:

Փոքր Հայոց բաժանմունքները

Փոքր Հայոց հնագոյն բաժանումն է զոր կը յիշատակէ Խորենացին, և Կ'ընծայէ Հայոց Արամ Նահապետին, ինչպէս նշանակեցաւ թիշ մ'առաջ: Յովհաննէս պատմարան կաթողիկոսն ևս մէջ կը բերէ նոյնելք զատ զատ, ճշելով մասամբ իր տեղեկութեանց համեմատ, և ասոնք են իր խօսքերը. « Արամայ բազում արութիւն « բաջութեանց մրցանաց պատմի, և ըն « դարձակեալ ասի հարատութեամբ բազ « մատ զահմանս Հայոց հասարակ ընդ « չորեսին ոլորտս երկրի. զի բատ բաջա « փայլ հանդիսի առն զօրութեան, որ « շուրջ զմեւք են ազգը՝ ի նորին անուն « յարակցարար Ալբաննեակո զմեզ անուա « նեն: Սա ոչ միայն զայլս ոմանս զիւ « բախարս, այլ և զիապուդիկեցին ևս բա « զում արիակն բաջամարտութեամբ ընդ « իրեն նուաճեալ սեպհականէր. և զկլի « մայն զայն և զՊրոտովն բատ իւրումն « իսկ անուան Ալբանի անուանէր, որ մին « չե ցայսօր այս անուն ի յունականաց « անտի աշխարհին այնիկ անուանի: իսկ « յԱլբաննէն յայնմանէ կոչեցելոյ մինչե « ցկողմանս Պոտացւոց՝ Առաջին Հայը « զաշխարհն անուանեաց, և ի Պոնտոսէ « մինչե ցոլորտս բաղարին Մելիտինոյ՝ « Երկրորդ Հայը, և ի Մելիտինոյ մինչե « ցահմանս Ծոփաց՝ Երրորդ Հայը. և ի « Ծոփաց մինչե ցրազաքն Մարտիրոսաց « յաշխարհն Աղճնեաց արևմտեայ՝ Պոր « բրորդ Հայը. այս մինչե ցրնիկ սահմանս « տէրութեան իւրոյ. իսկ զսեպհական և « զրնիկ աշխարհն իւր համատարած, զսա « Մ'եծ Հայը անուանեաց» (Ճեռազիր, էջ 10):

Խորենացին իր աշխարհազրութեան մէջ կը նշանակէ միայն երեք գաւառ Փոքր Հայոց համար, զորոնք կը զատէ Մ'եծ Հայաստանի տասն և հինգ աշխարհներ:

րէն. և այս երեք գաւառներն են. « Եր « կըրորդ Հայը. յելից կալով լիկիոյ առ « Տաւրոս լերամբ, ունի լերինս երիս, և « գետս չորս և զդրունս երկու ելաներց « Ասորոց:

« Առաջին Հայը՝ յելից կալով առաջին « կապատովկիոյ, առ երի Երկրորդ Հա « յոց, և սահմանի յելից Եփրատոյ, և « լեառն ունի զԱրգէոս, և զետս երեսուն, « զԱլիս և զայլ մանունս:

« Երրորդ Հայը են՝ որ կան յարևելից « կապատովկիոյ և երկայն տարածի մինչև « ցԵփրատ. և ունի զետս երկու, և լերինս « բազումս մեծամեծս ցան և երկու»:

Իսկ որ այս զրութիւնը չեն համարիր խորենացոյն:

Իսկ Չորրորդ Հայըը կը կարգէ Մ'եծ Հայոց հնգեաւասան փոքր աշխարհաց մէջ, և կը սահմանէ այսպէս. « Չորրորդ Հայը « յերի կայ Բարձր Հայոց. և գաւառը են « ի նմա ութ, Խորձէն, Հաշտեանը, Փաղ « նատուն, Բալահովիտ, Ծոփիք, Հանձիթ, « Դորէց, Դէկիթ: Ունի բերդս և գետս և « լերինս. և բիւրեղ, ունի և երէս և « հաւա և ծկունս, և ի զագանաց առիւծ»:

Արտաքին պատմագրաց մէջ ալ կան աւանդուած փոքր Հայոց բաժանմունքներ, որոնց մէջ իրը հնագոյն կը զնեմ նախ Պտղոմէայ աշխարհազրի զրած եօմներորդ զլուխը. « Դիր Փոքրոն Հայոց, որուն հիւ « սիսայնազոյն մասը կը կոչուի Որպալի « սէնէ, և անկէց վար եղածը Տչտուլանա, « որուն կը յաջորդէ Երեսիքա, որուն « վարի կողմէ է Հօրսէնա և հարաւայնա « զայն մասը. Հօրսէնայէն վար կու զայ Որ « պիսէնէ»: Վաղաբներուն անունէն, զորոնք Պտղոմէոս կը յիշատակէ Եփրատոյ եզերըն և երկրին ներքին կողմերը լեռներու վրայ, կը նանց հետեւնել՝ թէ այս հինգ գաւառներս իրենց մէջ կը բովանդակն բոլոր այն երկիրներն՝ որ կան Եփրատոյ արևմտեան կամ աշխակողմը, կիւմիւլիանէի սահմանէն մինչե Մելոս, հիւմիւսին զէպ հարաւ երկնալով, որոնց մանրամասնութիւնն ետքէն:

Երրորդ Հոռովմայեցից տիրեցին այն կող-

մերուն, նոր նոր բաժանմունքներ ըլլին. ևս  
Մեծին կոստանդիանոսի ասհմանածը մէջ  
բերել յարմար կը զատիմ: Ասիկայ րոլոր  
Հոգվէսական պետութիւնը բաժնեց նախա-  
րարութեանց, և զատնք վիճակներու և  
վիճակները գաւառներու. որոնցմէ Արեւ-  
լից Նախարարութեան Պոնտական վիճա-  
կն մէջ կը զոնուէին այս երկու գաւառ-  
ներն

Արմենիա առաջին, Աբրաստիա.

Արմենիա երկրորդ, Մեծիսինէ:

Առաջին հայոց մայրաքաղաքն էր Սե-  
րաստիա, ուր կային նաև Սերաստուպոլիս,  
Նիկոպոլիս, Կողոնիա, Խատաղա, Ամփե-  
պոլիս, Փերիսաս, Հերակլեպոլիս կամ  
Պիտարուլէ քաղաքներն: Ետքէն աւելի ևս  
ընդարձակեցաւ այս գաւառն, իր մէջը գրա-  
ւելով Երիգա, Կամախ և Թէոդոսուպոլիս  
գաւառները:

Երկրորդ Հայոց մայրաքաղաքն էր Մե-  
լիսինէ. կային նաև Ալկա, Կոմանա կա-  
պաղովկիոյ, Աբապիսոս, Կիթարիձոր և  
Երբեմն նաև Սոփենէ (Ծոփիք) և Տրոսպո-  
տիս կամ Տիոսպոնտիս:

Յուսախինիանու մեծն, որ Զ27-Զ63 տա-  
րիները թագաւորեց, իր նորագոյն օրինաց  
մէջ, թիւ Ալլ, նոր բաժանումն ըրաւ Փոքր  
Հայոց, չորս գաւառ, Մեծ Հայոց բանի  
մարզմեան գաւառներն ալ խառնելով  
անոր հետ, որոնց այն ատեն իր իշխա-  
նութեան ներքեւ էին:

«Ուաջին Հայը, մայրաքաղաքը Բա-  
սէն կամ Լէնդուպոլիս, որուն կը վե-  
ր բարերէին Թէոդոսուպոլիս (Երզում),  
« Խատաղա, Նիկոպոլիս, Կողոնիա, Տրա-  
պիզոն, Կէրասոն քաղաքները:

«Երկրորդ Հայը, մայրաքաղաք Մե-  
սաստիա, որուն ծեռաց ներքեւ էին Մե-  
սաստուպոլիս, Կոմանա Պոնտական,  
« Ջիլէ և Բրիսա քաղաքները:

«Երրորդ Հայը, մայրաքաղաք Մել-  
իսինէ, որուն կը պատկանէին Ալկա, Ա-  
բապիսոս, Աբարաթիա, միւս Կոմանա,  
« Կէրիգա կամ Կոկիսոն քաղաքները:

« Չորրորդ Հայը Եփրատէն անդին,  
« մայրաքաղաք Մարտիրոպոլիս. առա-

« Ճիններէն աւելի շատ ժողովուրդներ ու-  
« նէր: (Լըքին Քրիստ. Արեւելք, հա. Ա.  
« էջ 420):

Աւանկ բան մ'եւ կը պատմէ Յով-  
հաննէս կաթողիկոս Մօրիկ ինքնակալին  
համար, թէ և Ապա Կայսերն Մաւրիկայ  
« ձեռներէցութեամբ իմ փոփոխութ ա-  
« բարեալ անուանց աշխարհացն այնոցիկ,

« որ ի մերոյն Արամայ կարգաւ եղեալ

« էր: Եւ նախ զԱրմէնին զայն որ Առա-  
« յին Հայըն անուանիւր, Երկրորդ Հայը  
« զնա Մաւրիկի կոչեաց, յորում մայրա-

« քաղաք Մերաստիա: իսկ զկապարովկիա՝  
« յորում մայրաքաղաք Եխսարիա, և Եր-  
« կրորդ Հայը նախ անուանիւր, Կոչէ զնա  
« Երրորդ Հայը, և առնէ եպարքի: Իսկ

« զՄէլիսինէ որ ունի զշամանուն իր գա-  
« ւառ և է Երրորդ Հայը, Կոչէ զնա Ա-  
« ռաջին Հայը: Իսկ զՊանտոս՝ յորում

« մայրաքաղաք է Տրապիզոն, Կոչէ զնա  
« մասն մեծին Հայոց: Եւ Չորրորդն կո-  
« չեցեալ Հայը, յորում մայրաքաղաք

« Մարտիրոսաց պոլիս, այսինքն Նիկոր-  
« էրտ, Յուսախինիանու զնա զբէ ի դի-  
« ւան արքունի: Դարձեալ զաշխարհն

« Կարնոյ, յորում մայրաքաղաք Դիոսուպո-  
« լիս, անուան զնա Մեծ մասն Մէծին

« Հայոց: Եւ որ ի Մեծն Հայոց մասն  
« ինչ մացեալ էր ի ձեռն Հոռոմոց, ի Կող-  
« մանց անտի Բասենոյ մինչեւ ի սահմանս

« Ասորեստանի, Մեծ Հայը: Իսկ զկող-  
« մանն Տայոց սահմանօց իւրովք հան-  
« դիրձ՝ Խորագոյն Հայը անուանէ: —

« Այսպէս ամեննեցուն սոցա փոփոխութ  
« արարեալ Մաւրիկայ՝ զբէ ի դիւանս ար-  
« քունի: Արգ քեզ Երկրորդեալ զրեցաւ,

« զի մի տգիտութիւն ինչ քեզ զարկցես  
« զայն, զոր յառաջագոյն առ յինէն բեզ  
« պատմեալ եղեւ, Առաջին և Երկրորդ և

« Երրորդ և Չորրորդ Հայը. զի այս Ա-  
« ռաջինն ի մերոյն յԱրամայ բաջէ ա-

« նուաննեալ եղեւ, իսկ այս Երկրորդի Մաւր-  
« կայ Կայսերէ Հոռոմոց»: (Չեռազիր, էջ  
41, 42):

Կոստանդին Պորֆիրոսէն ուրիշ բա-

ժանում մը մէջ կը բերէ թեմերու, որոնց

տասնևեօթն թեմերը կ' լնծայեն կայսերութեան այն գաւառներու որոնք Եգէական և Պրոպոնտիա ծովերէն կը տարածուին մինչև Եփրատ, որոնցմէ յարմար կը դատիմ յիշատակել հետազայները :

- 2 թեմ Հայոց կամ Արմինական
- 10 թեմ Կողոնիոյ
- 11 թեմ Սեբաստիոյ
- 12 թեմ Լիւրանիոյ

Նաև կապադովկիոյ և Խաղտեաց թեմերը մասն ունին Փոքր Հայքէն, և այս բաժանման հեղինակ եղած է Հերակլ կայսրը :

Այս ամէն բաժանմունքներէն՝ զորոնք վերը յիշատակեցի, կոստանդիանոսի մեծի ըրածը լաւագոյն կը Թուփ, եթէ ներուի տալ աւելի ընդարձակութիւն մը, մանաւանդ դէպ հրամասիս: Ասանկ այժմու Եւգուկիոյ, Արքաստիոյ, Նիկոպոլսի և Մելիտինոյ Օսմաննեան սանճանքները, արեմտեան մասամբ Խարբերդի, կը Կազմեն Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայք. պէտք է յաւելու նաև Ամասիա և այլ ինչ ինչ տեղեր Հարաւաէն և այլ Կողմերէն՝ արեմտեան Հայաստանը ճիշդ ունենալու համար:

Եւ այսպէս կրնան ասոնք համեմատիլ այն հնագոյն բաժանման՝ որ եղած է կապադովկիոյ և Պոնտոսի թագաւորութեանց ժամանակ, որոնք են.

Մորիմենէ	Ազտաղ Մատէնի
Զէյլիս	Ջիէ
Կազակէնէ	Մարտուան, Ալմասիա
Տաբրիմոնիա	Խոտկէ, Թողադ
Կոլոբենէ	Սեբաստիա, Սիվազ
Կամփսենէ	Տիվրիկ, Չառա
Փանարսէա	Եւպատորիա, Հէօրէկ
Օրպալիսինա	Գարահիսար
Տեսուլանա	Աղէէրապանտ
Էրեմիքա	Կէրճան
Հօրսէնա	Ա՛ն
Օրպիսենէ	Արարկիր, Արկաւա
Լափալեզէնէ	Կիւրին Թոնուզ, Ազիզիէ
Մելիտենէ	Մալաթիա
Մարկարաւսենէ	Նէշէէնիր
Կատասնիա	Կէօցոսւն, Հաճին, Զէյթուն
Արաւսենէ	Քեահիթա

Այս հին աննուններուն զիմացը նոր յորջորջումները դրուած են մերձաւոր համեմատութեան համաձայն, և ոչ թէ ամէն մէկին տեղակալութեան և ճիշդ տարածութեան չափութեան չափի:

Բաժանման այլևսյութեան պէս նաև կ Փոքր Հայոց սահմանն հին ատենէ շատ մը փոփոխութեանց ներքեւ ընկած է, ընդարձակուելով և ամփոփուելով, ինչպէս նոյն աշխարհին տիրողներուն յարմար տեսնուած է:

#### Փոքր Հայոց բնակիչները

Հնութիւն պրպտող երկրաբաններուն կարծիքն է՝ թէ Փոքր Հայոց Եփրատէն աւելի կամ նուազ հեռու գաւառները, կապադովկիոյ հետ միանգամայն, որուն երեմն մասն ևս էին, բնիկ Հայաստանէն շատ ուշ բազմամարդ եղան բնակիչներով. և ասկա առաջ եղած էր երկրին բնական կազմութենէն. զի ստորերկրեայ հրոյն պատճառով այն տեղերն յաւել և յապականութիւն մասնուած էին, և ասոր ազգեցութիւնը կը տեսնուի ամէն տեղ. անանկ որ ամայի անապատ մ'էր այն, և հազիւ ուրեմն տեղ տեղ ցան և ցիր բնակութեան նշանագնն մը կը տեսնուէք: Անոնց հետզինտէ անձեռով, և Մերգաւոց և Հայոց հետ կցորդութեամբ՝ մարզուցան բաղադրական կարգերու և կրօնիք մէջ:

Խորենացին ևս իրը 2000 տարի Քրիստոսէ առաջ Փոքր Հայոց պատկանեալ գաւառներն անմարդաբնակ կը համարի՝ երրոր կ'ըսէ. «Բստ նմին օրինակի ի տեղացն այնողիք, (կեսարիոյ գաւառէն զոր Արամ առաջին Հայց անուաներ էր, հոն զինուրական գաղթականութիւն մը հաստատելով, իրեն ազգական Մշակին առաջնորդութեամբ), մինչև ցրուն իր սահմանս զրազում անհինակ երկիր երից բնակչոք, որը երկրորդ և Երրորդ անուանեցան Հայր այլ և Պորբորը»:

Հնագոյն աւանդութիւն մի է, թէ Ե-

փրատայ արեմտեան կողմն եղած զաւառաց քնակիչները թարթի Գամեր որդիէն սերած են. ասոր համար Եւսերի Քրոնիկոնին և մեր մատենազբաց մէջ կը զբով. «Գամեր և ի նմանէ կապաղովկացից կամ Գամիրը»: Եւ արդարն պարսից այն կողմերը զալին առաջ կապաղովկիոյ մէջ կը յիշուն կիմերեանց կամ Գամերեանց. Աստուածաշունչ մատենանց և խորենացին այն երկրին բնակիչները (գլխ Արամայ ընծայուած ժամանակ) կը հաստատեն՝ թէ Քամայ զարմերէն կամ Տրտանեանիներէն էին: Եւ թէ Յարեթեանց կամ արիական տոհմերը զանոնց վանելով, Արամայ բաշի Հայկազնոյ և իր տեղակալ Մշակայ առաջնորդութեամբ՝ ըստ Խորենացոյն, կամ ընդ հրամանատարութեամբ Մոսորայ իշխանին Մոսորայ կամ Աղքանազեանց՝ ըստ այլոց, իրենց ազգին զաղթականութիւնը հօն:

Յոյնց նոյն կողմերու բնակիչները Ասմական կը համարէն, զորոնք Ասորի կամ սպիտակ Ասորի (Եւկոսիրիէն) կը կոչէին, որ է արամեաւորո. և այսպէս կը զրուի Հերոդոտի քով. «Կապաղովկացից՝ զրունց մենց Եւկոսիրացի կ'անուանենց, և թէ այս սպիտակ անուամբ կը զանազանին ասոնց բուն Ասորիներէն, որոնց գորշագոյն են»:

Այդ ինչ զատում որ այս աւանդութեանց վրայ ընել ուզուի, այն հաստատ կը ման՝ որ Եփրատի արեմտեան կողմն եղող զաւառներուն, մանաւանդ անոնց որ նոյն գաւոյն աւելի մօտ են, բնակիչները հին ժամանակներէ ի վեր Հայր էին մեծագոյն մասամբ, կամ Հայերէն սերուած, որոնց եկեր փոխանակեր են թերևս յառաջազոյն հոն բնակած հնագոյն ազգերն. և այսպէս մասն եղաւ Հայոց աշխարհին, և մասունեցաւ Նոր կամ Փոքր Հայը անկց ետև:

Դժուարին բան մը չէ ուրեմն մատեն՝ որ Հայը պահած էին և կը խօսէին իրենց ընիկ բարբար. մանաւանդ՝ որ կից ըւլալով Մեծ Հայոց, միշտ յարաբերութեան մէջ էին իրենց ազգական անդամներ:

պէտ ժամանակէ մ'ետև անոնց մէջ շատեր վարժեցան յոյն լեզուին, բայց անշուշտ չմոցան բուրովին իրենց հայ լեզուն, ուստի և իրենց լեզուին անգէտ չէն. մանաւանդ հասարակ ժողովուրդը: Կար նոյն աշխարհին մէջ անշուշտ և հայ զպրութիւն յունական տառելով, ինչպէս Մեծ Հայոց մէջ սովորութիւն ունէին յոյն և ասորի տառերով հայերէն սորվեցնել. Որովհետեւ չկրնար մտածուիլ, որ Հոռվածկան ինքնակալութեան պայծառ ուրեն, երբոր Փոքր Հայը ծաղկեալ և բարգաւաճած էր մեծապէս, մանաւանդ ըրիստոնէութեան առաջին դարերուն մէջ, մինչդեռ կը գտնուէին ընտիր ընտիր եպիսկոպոսներ, քահանայներ և կղերականներ, անփոյթ եղած ըլլան հոգ տանելու այնշափ բազմութեան հաւատացելոց, որոնց չկըրնալով սորվիլ յունական լեզուն՝ հոգերական նպաստներէ և հրահանգութիւններէ զորկի մային: Նա մանաւանդ եթէ ուզենց հաւանիլ խորենացի Պատմահօր, Փոքր Հայոց հասարակաց բարբառ եղաւ հայերէնն Արամայ բաշի օրերէն, որ նոյնը պատուիրեց այն երկիրն նախնի բնակչաց:

Եւարբատիսեանց պատմութեան մէջ կը զրուի՛ որ Մերաստիոյ Ա. Վլաս Եպիսկոպոսը հայերէն կը խօսէր Ա. Եւստրատիոսի հետ, յոյն կամ հոռվմայեցի զահճէն ծածկելու համար իրենց խօսակցութեան նիթիթ:

Մելիփոնոյ Եպիսկոպոսը Ակակ կը ջանար Հայոց լեզուին զիր յարմարցնել, և նոյն գործոյն յաջողութեան համար աշխատեցաւ Մելիփոն Վարդապետին հետ:

Կը պատմէ Ազաթանգեղ՝ որ Հայոց Մեծաց Եպիսկոպոսապետը Ա. Գրիգոր Լուսաւորիչն, երբ Ակոնդիոս կեսարու Հայրապետէն մերնաղորուելով հասաւ Մերաստիա, բազմութիւն եղբարց, եպիսկոպոսներ, ժամանակամիտ կը անդամներ և բազմաթիւ աշխարհական գլնը զիմաւորեցին, զորոնց հաւանեցու լուսաւորիչն, և գունդ գունդ կը տանէր իր հետն՝ որ վիճակեցն Մեծ Հայոց մէջ բահանայութեան և Այդ թէ որ հայերէն չգիտնային, ինչ բանի համար

Կուգէր ինքը տանիլ զիրենք և եպիսկոպոս և քահանայ կարգել իր վիճակին մէջ. ու բովհետեւ հոյ Փոքր Հայոց պէս շատ չէր յունարէն զիտղողներուն թիւր:

Ասոնք կը համարիմ թէ բաւական են հաստատելու, թէ հին ժամանակէ ի վեր Առաջին և Երկրորդ Հայոց ընակչաց մեծագոյն մասը, մասնաւորապէս Մերաստացիք, Հայ էին, և իրենց հին եպիսկոպոսներն նոյն ազգէն սերած, ինչպէս յայտնի է ևս Մերաստիոյ ծանուցուած առաջին Եպիսկոպոսին անունէն, որ կը կոչուէր Մերուժան: Նոյնպէս և ուրիշ նոյն երկին պատկանեալ բնակիչները Հայ էին, և հայերէն էր իրենց լիզուն: Տարաս քահանային խօսքին ևս կ'ավանդին այս իմաստը. «Հայը, կ'ըսէ, նոյն ժամանակը (Մաքսիմիանոս Դայայի հետ Տրդատայ ըրած պատերազմին ատեն) այն քաղաքներու մէջ որ Հոռվմայեցոց հապտակ էին (ինչպէս Փոքր Հայը), ընդունեցան քաղմութեամբ մարտիրոսութեան պատկն: Իսկ իբրև ազգ (որոնք Տրդատայ թագուուրութեան ներքե էին), առաջին գարուց այս քրիստոնեայները զին ի ձեռին պաշտպան կեցան ճշմարիտ կրօնից: Իբրև անհատ անձեր (որոնք Փոքր Հայոց մէջ Հոռվմայեցոց հապտակ էին) նոյն ճշմարիտ կրօնից համար մեռան (Հա. Ա, Գլ. ԺԴ.):

### ԳԼՈՒԽ Բ:

ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՊԱՏՄԱՆԱՆ ԴԵՊԻԵՐԸ

Այս գլուխը կը բովանդակէ 530 տարուան պատմութին. 195 տարի Քրիստոսէ առաջ և 385 տարի անէ ետեւ. ուր խօսք պիտի ըլլայ Ա. Արևմտեան կամ Փոքր Հայոց իշխանութեանց վրայ: Բ. Միհրգատ և Տիգրան կը գրաւեն նոյն իշխանութիւնները: Գ. Հոռվմայեցիք նոր կարգադրութիւններ կ'ընեն անոնց մէջ: Դ. Մերաստիոյ Պոլեմոն տորմին պետութիւնն, և Մերաստիա քաղաքին վրայ տեղակութիւն: Ե. Փոքր Հայոց նոր թագա-

ւորութիւնն և Հայաստանի գաւառ Հոռվմայեցուց ըլլալը:

Փոքր Հայոց իշխանութիւնները

Այս ժամանակ արևմտեան Հայոց վրայ կար երկու պատմութիւն. առաջինն է Ծոփացիային արևմտեան Հայոց մասին պատմութիւնն. երկրորդը՝ հիւսիսային արևմտեայ մասին Հայոց պատմութիւնը: Պիտութիւնները կ'երեկին ինձ երկու, ուստի և այս յօդուածը պիտի բաժնեմ երեք հատուածի:

### ՀԱՅՈՒԱՅ ԱՊԱՅԻՆ

Ծոփք և իրեն վերաբերեալ տեղերը հին ժամանակիներէ, Ապաւղի և Դաւթի իշխանութեան օրերէն, առանձին պետութիւն մըն էր, Մեծ Հայոց երեք պետութիւններէն զատ, որոնք են Ասքանազ, Մինինի և Արարատ, ինչպէս կը յիշատակէ Աստուածաշունչ մատիանը:

Հետեարար ասիկա պէտք է անուանել չորրորդ պետութիւմ՝ միւսներէն կրտսեր, և յաւէտ արևմտեան Հայաստանի պատկանեալ, որ կը սկսէր նպատ լեռնէն զէպ ի հարաւային արևմութք. և այս է Ծոփք աշխարհն և իրեն պատկանեալ երկիրներ:

Եսեկիէլի մէջ երկու Սարա կը յիշուի ըստ հայ թարգմանութեան (Գլ. Խլ., հմբ. 22, 23), առանց որոշիչ նշանի մը. բայց հին և նոր կապակարանաց մէջ, այս նիւթին նկատմամար այլ և այլ խօսքերն իրարու հետ համեմատելով, մի և նոյն Սարա (հայերէն) անուամբ երկու ուրոյն երկիր և երկու ուրոյն պետութիւն նշանակուած կը գտնուի. մին զետեղուած է Պաղեստինի հարաւակողմը, ըստ այնմ «Ճիկինն Սարայ» (Գ. թագ. Ժ. 1) և «Դիշուոյն հարաւոյ» (Մատթ. Ժ. 42). Իսկ միւսը նոյն Պաղեստինի արևելեան (հիւսիսի) կողմը. «Թագաւորք թարսափ և կղզեաց. . . թագաւորք Արարայ և Սարայ պատարագ բերցեն նմա» (Մագ. Հլ. 10). և «Ահա մոգք արևելից եկին» (Մատթ. Բ. 1,

1). Ասորական և Արաբական թարգման նութեանց մէջ այս երկու Սարանիերը բոլորովին տարրեր կերպով զրուած են. որոնք թիշ լուսաւորութիւն չեն ընծայեր խնդրոյն: Հարաւային Սարան ասորերէն զրուած է Շապա և արաբերէն Սապա: Իսկ արեւեանն՝ ասորերէն Մոպօ (Տղոպօ) և արաբերէն Սոպան (Դուպա), որոնք նոյն են ըստ ձայնին, լատին Սոփինէ և հայ Ծոփը անուանակոչութեան: Գիտեմ որ ունանք այս արեւեան Սարան կը համարին Դամասկոսի մօտ բաղար մը կան որ կը նոյնացնեն Հալէպի կամ Մ'ծրնայ հետ:

Արեւեան Սարանը յիշաւակը կ'ըլլայ 1070-1030(?) թուականաց մէջ Քրիստոսէ առաջ. Կրնայ ժուածուի՛ որ անիկայ Նպատ (Նվնփատ) լիոնէն սկսելով կը տարածուիր զէպ հարաւ, և կը բովանդակէր իր տէրութեան մէջ Խորրերդ, Արկանա, Աներէկ, Մելիտինէ, Բերիա, Պիհեսնի, թերես նաև Ալրփա գաւանները կրնայ ըլլալ որ Ծոփացոց բնակութիւնը յառաջազն նշանակուած երկրին հարաւային բաժնին մէջ ըլլալով, ապա Դաւիթէն յաթթուելնէն ետև հիւսիսային բաժնին անցած ըլլան: Զիարդ և իցէ Ծոփաց զաւաորին զյութինը նոր և անձանօթ չէ:

Սոպան, Մոպօ, Սոփինէ, Ծոփը տէրութեան յիշաւակը կ'ըլլայ Ա. Թափաւորւթեանց մէջ Մաւուզայ ժամանակ, յորում իրը 1020 տարի Քրիստոսէ առաջ Ռուսոպ թագաւորը միջամտութիւն ըրաւ Ասորերի զործոց: Բնդարձակ է ասոր յաջորդ՝ Հատատ - Եզէրի (Աղրաազար) գործերն Բ. Թափաւորութեան մէջ Դաւիթի ժամանակը: Այ շատ զօրացաւ, տարածեց իր տէրութիւնը, մասնաւորապէս նէպ հարաւ Ասորերի կողմէն. և շատ թագաւորներ և իշխաններ իրեն նիզակակից և հարկատուեղան: Ազար իր պետութիւնը հաստատելու համար միջին Եփրատայ վրայ՝ Դաւիթի զէմ պատերազմի եւաւ: Եմաթայ (Համայի) ճակատը ձախորդ գնաց: Հատատ-Եզէր կորուս 1000 կառք, 6000 հեծեալ, 20,000 հետեակ: Այս առաջին ճակատէն ետև նոր փորձ մ'ընելու դիտմամբ, կամ նախըն-

թաց պարտութեան վրէժն առնելու մտցով, իր նիզակակից թազաւորաց հետ նորէն պատրաստուեցաւ կազմեցաւ, և Սովիակ և Ելամ զօրավարաց հրամանատարութեամբ՝ հզօր բանակ մը գործելու սկսաւ: Բայց այլ և այլ ծախորդութենէ ետև ուղիչ ճակատամարտն ևս կորսա անհնարին կոտրածածով. ի լրումն աղէտից Սովիակ սպարապէսն անզամ ինկաւ վիրաւոր: Դաւիթի մեծանուն զօրավարներն և Յովար դիմեցին մինչև Եփրատ և աւելի առաջ, զրաւեցին Հատատ-Եզէրի քաղաքներն, որոնք են Վէթէ (Պաթնէ), Պէրօթա (Պիրթա, Պիրէճիկ): Թէզա (Թէզապահ, Ծոփա), Դու Վուն, Մ'ատէրա (Մ'ապսակ կամ Թապսակ, Մ'ատէրէթ) քաղաքներէն շատ աւար ապին. Նիզակակից իշխանը իշխանութեան, մտան Դաւիթի ծառայութեան, ինըն նիկ Հատատ-Եզէր ճարը հատնելով հարկատու եղաւ Խրայէրի թազաւորին, և ձեռքէն եւան իր նիզակակիցներն և հարաւային գաւանները յամի 1030: Խրայէրի պետութեան հզօր ժամանակը շատ երկատակ եղած չէ, և ոչ իրենց այս վերին իշխանութիւնը վասն զի Ասորեաւան իշխանին նորոգելով իր հզօր գործեթիւնը, դարձեալ նոյն կողմերը իրենց վերին իշխանութեան ներքե անցած էին: Հողեկեն Ասորեաւանի սպարապետը կը նուանէ Մ'ելեղա (Մ'ելեղա, Մ'ելունէ) հոյակայ քաղաքը: Յիշեալ սպարապետին նետդրուայի (Պիթուլա) բովլ Լատուունի մէջ իրարկուելէն ետև՝ մարական զերիշխանութիւնը տեղակալեց ժամանակ մը: Վիրջապէս Մ'եծին կիւրոսի և մանաւանդ Դարեհ Վշասապեայի ժամանակ՝ նման բաժանում եղած է: Գանեոփոն կը խօսի Ծոփաց աշխարհին Տըիբազ իշխանին վրայ, որ Պարսից արքունեաց մէջ բարձր դիրք ունէր. իրեն յաջորդներէն եղաւ Դարեհ կողման զանաժաման իշխանը, որ ապա թափաւորեց Պարսից գահուն վրայ:

Մ'եծին Աղեքսանդրի աշխարհակալութենէն ետև, որ գրաւեց բոլոր Հայաստան, Հայք շուտ նորոգեցին իրենց պետութիւնը նախկին ամբողջ սահմանաց վրայ, արեւ-

լեան և արևմտեան գաւառներով։ Ալեկիանցիք ընականապէս հաճ չէին, զի իրենց սեփականած էին արենելից ինքնակալութիւնը։ Պատերազմ բացաւ Անտիոքու մեծն և ձեռք բերաւ մեծ յաղթութիւն մը, և Հայաստանը տկարացնելու համար երկու քի բաժնեց զայն, արենելեան հիւսիսային մասը տուաւ Արտաշէսի, և արենմտեան հարաւային մասը՝ Դարեհի կամ Զարեհի, որ միւսէն նուազ րլլալուն համար կոչուեցաւ Փոքր Հայք։ Եւ այս իշխանութիւնը կը փակէր իր մէջը, գրեթէ Խորենացոյն Գ. և Գ. Հայք անուանած երկու գաւառները միայն, այսինքն Մելիսինչն իր շրջակայիւն և Խարբերդի այժմեան գաւառին մեծ մասն, որ Եփրատէն անդին է, և ուրիշ տեղերով, որ հին Ծոփքէն շաաւ տարբեր չէր։ Իսկ աշխարհին մայրաբաղաց եղաւ Ծոփք՝ Եփրատայ եզերն, ուր Դարեհ կամ Զարեհ հաստատեց իր իշխանութեան աթոռն ։ Զարեհին տոհմը իշխեց նոյն կողմերը մինչև 70 տարի Քրիստուէ առաջ։ Իրեն յաջորդ կը համարուի Մէրուփարզան կամ Մորփիւլիւկ։ Վերջինն եղաւ Արդէն կամ Արտանէս կամ Արշակ, որուն ձեռքէն առաւ Տիգրան Մեծն։

Իսկ Հայոց արենելեան գաւառներուն՝ որ կոչուեցան Մեծ Հայք, կուսակալ կամ նախարար անուանուեցաւ Արտաշէս։ Այս երկու Հայ պետութիւնները գարձեալ եղպատ լեռներով կը բաժնուէին իրարմէ։

Անտիոքոս մեծ յամին 190 Հոռվար յեցւող դէմ պատերազմի ելլելով, Մակնեսիայի քով տրուած որոշիչ ճակատամարտին մէջ բոլորովին բեկաւ իր զօրութիւնը։ Արտաշէս և Զարեհ յաղթողներուն հետ բարեկամութեան զաշն դնելով՝ Մելիսիացիներէն զլուխ վերցուցին, և թագ կապեցին ամեն մէկն իր բաժինին վրայ և թագաւորեցին, և կը գարէին խաղաղութեամբ իրենց աշխարհը։

### Հատուած երկուրոց

Ալեկիացիք հարգէն սափուած լուռ կեցած էին Հայաստանի անկախութեան

նկատմամբ։ Աւատի Անտիոքոս Եպիփան (174-164) աթոռ ելածին պէս յամին 174 պատերազմի ելաւ Արտաշէսի Մ'եծ Հայոց թագաւորին դէմ, որ ի պարտութիւն մատնուելով գոհացուց Անտիոքոսն. այլ համարելով որ անոր այս արշաւանքը Փոքր Հայոց Զարեհ թագաւորին գրգութենչն եղած ըլլայ, կը խորհէր անորմէ վրէժ առնուլ Զարեհ երրոր իմացաւ անոր միտքը, շուտով պատգամաւորներ ճամբեց Արտաշէսի շատ ընծայներով և խաղաղութիւն ըրաւ անոր հետ, և կրտսէր որդին Դորն անոնմ՝ պատանդ դրաւ անոր քով։

Ասկից վերջ երրոր Դարեհի կամ Զարեհ մեռաւ (Հ. Մ'րը. Զամշեան Հու. Ա. Գլ. Խլ), Արտաշէս իրեն յարմար առիթ համարեցաւ, և սկսաւ պատրաստուիլ որ յարձակի Փոքր Հայոց վրայ և տիրէ նաև այն մասին, Այն ատեն Մորփիւլիկէս երէց որդի Դարեհի, որ կը նստէր Ծոփքաց աշխարհին մէջ, անապարեց ինկաւ կապագովկիոյ Արէթ կամ Արփարաթ թագաւորին քով և անկէ օգնութիւն ինդրեց։ Այն ատեն Արտաշէս գեսպան դրկեց Արփարաթի, և բաւաւ. ինչ ունի դու Դարեհի որդույն հետ, եկուր միարանէ ինձի հետ և վեցնենք մէջտեղէն անոր երկու որդիքը. ևս կը սպաննեմ Դորոն որ իմ քովս է, և Դուն Մորփիւլիկէսն որ քեզի ապաւիներ է, և կը տիրենց իրենց ժառանգութեանը, և Փոքր Հայքը ամրող կը բաժնենց մեր մէջ, որչափ սահման որ ունի։

Մտիկ չըրաւ Արփարաթ, մանաւանդ դեպանաց շատ մը մեղաղրական խօսքեր ըսաւ, և յորդորեց որ անանկ անիրաւ գործերէ ետ կենայ, իսկ ինքն Արփարաթ արքայ զօրքով ձեռնտու եղաւ և թագաւորեցուց Դարեհի որդին Մորփիւլիկէսը Փոքր Հայք աշխարհին վրայ, ինչպէս կը գրէ Դէղողորոս Արկիլիացի՝ Հենրիկոս Վաղէսի Քաղուածոց մէջ (325), ուր կ'անուանէ զայն Մորփիւլիկէն կամ Մէրփփուճէն, որ է Մէրփորարզան։

Իսկ Արտաշէս որ կ'ուգէր Մորփիւլիկի դէմ պատերազմի ելլեւ, կենաց վերջ հա-

սած ըլլալով մեռաւ, և իրեն յաջորդեց Արտաւազդ որդին, ինչպէս կը զրէ Մորարտոն (Գլ. ԺԱ). Ասոր ժամանակը երևելի է Հայաստանի մէջ Դատ իշխանը, զոր Պողիւրիս Մ'հրգատ կը կոչէ:

Հիմա նորէն կը դառնամ Մորփիւլիկս կամ Միհրորապանի: Նոյն ժամանակ՝ ինչպէս յայտնի է՝ Մ'հեծ Հայաստանի մէջ կը թագաւորէր Արտաշէսի որդին Արտաւազը: Խորենացւյն պատմութեան կարգը կը պահանջէ՝ որ Պարթևաց Արշակ Մ'հեծ թագաւորը յաղթէ Արտաւազդի և զրաւէ սնոր երկիրները և իր եղայրը Վաղարշակը կարգէ հոն թագաւորք: Սա ըստ պատմութեան նոյն խորենացւյն «Զօր բազում յիշըրպատականէ և ի Հայոց գումարէ, և զրոյր կողմի աշխարհիս միարանեալ՝ հասանէ առ սահմանօք խաղտեաց. քանզի Ղազիկա, Պոնտոս, Փոփէզիս, Մածաց և այլը ոչ գիտելիվ զամ պատերազմն Արշակայ, առ Մակեդոնացւյոց պետութիւնն զմիարանութիւն զաշանց հաստատուն պահէին: Վասն որոյ ոմն Մորփիւլիկիայ միարանեալ զասացեալ կողմանս զայսոսիկ, զրգոփ պատերազմ ընդ Վաղարշակայ, բայց պասամին միմեանց առ բարձրաւանդակի միո՞ջ ըլլով քարազագաթիւ՝ որ այժմ ասի կողոնիա. և մօտեալ ի միմեանս ձիգ ասպարիզօց միջոցացն՝ ամբանան երկորին կողմանըն բովանդակ աւուրս:

«Զէնի անցանելոյ բազում աւուրց ամրանալոյ կողմանց երկորունց՝ զրգոփ պատերազմ ի մերմէ կողմանէ: վասն որոյ յարդարէ կամայ կամ ակամայ և Մորփիւլիկիան զիւրոյ կողման ճակատն, հասանէ յանդուզն յարձակմամբ. քանզի այր ըըրտեայ էր, և անդամովք երկար և ընդ իրեարս պատշաճ, զոյք մարմոնյն և ոյժ սաստիկ ունելով: Ամրացեալ պղնձով և երկաթով և այլովք ընտիր վառելովք, ոչ սաստիկ թուռվ, տապաստ յերկիր արկանէր արս ընտիրս և քաջս ի մանկանցն Վաղարշակայ. և ջանայր անցանել հասանել յարցայն Հայոց ի մէջ խմբի մեծի և զինու ամրացելոյ: Եւ մօտ անցեալ յաջողեցաւ ձգել զսունն, քանզի էր կորովի նոցաւ ՄԲՏ ՄԲՏ 1910

և երկայնաձիգ, հեռի զաշտէն արձակեալ որպէս ի թոիչս սրաթե հասուց, Ալլ ոչ ինչ կարի յամեցին ընդ մէջ անցանել արց քաջ և անուանից ի զարդից Հայկայ և Ասորեստանւոյն Մենեկերիմայ, և աշտէի հարեալ սատակն զքաջն, և զզօրսն առաջի արկեալ ի փախուստ զարձուցանէն, բազում վատակս արեան հեղեալ՝ զերկիլ ոռոգանէին իրը հեղեղը անձրևաց: Եւ յայնմ հետէ խաղաղեալ զադարէր երկիրն, նուանեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ. և Մակեդոնացւյոցն զադարէր գոռ: Եւ այս այսպէս կատարեալ կարգէ զկողմանս Մաժարայ, զՊոնտացիս և զԵզերացիս, դառնացիս ի Հայս: Մինչև հոս խորենացւյն խօսքերն են, զորոնք Հ. Մ'հրայէլ հնուեալ կերպով կը պարզէ:

«Իրբէ լուսն զարշաւանս Վաղարշակայ խաղաղիք, Լազիկիացիք, Պոնտացիք, Կապադովկացիք, Փոփէզացիք և այլը, որը հաստատուն զաշամբ խաղաղութիւն ունէին ընդ Ալեւկիացիսն, խոռվեցան յոյժ. և ամենեցին առ հասարակ միարանեցան տալ պատերազմ ընդէմ Վաղարշակայ: Եւ եղէ նոցա առաջնորդ Մորփիւլիկս քաջ, որ երբեմ թագաւորն էր Փոքուն Հայոց, ըստ որում յիշեցաք ի վերոյ երբս 2(0)7» (Հո. Ա. էջ 2(0)9):

Հոյս կայ մոտացելու արժանի քանի մը կէտ. Ա. լւա կ'ըլլար կարծեմ որ Հ. Մ'հրայէլ ըսէր «Արզի Մորփիւլիկիայ երբեմ թագաւորի Հայոց» համաձայն խորենացւյն՝ որ Վաղարշակայ զէմ պատերազմի ելլոյ զօրպարին անոնմը կը զնէ Մորփիւլիկեան և ոչ Մորփիւլիկէս. և ասանկ աւելի լւա կը յարմարէր Վաշարկայ նշանակուած ժամանակին. մանաւանդ որ խորենացին պատերազմի մէջ կը ներկայացնէ Մորփիւլիկիանն իրը կորովի և յանդուզն երիտասարդ մը. Մորփիւլիկէս նոցա ժամանակի ծեր ըլլալու էր:

Բ. Բայց իրօք ովէ է այն քաջն, որ կրցաւիր ներբէ զումարել այնչափ ազգեր: Խորենացին կ'անուանէ ոմն Մորփիւլիկիան իրը անծանօթ անձ մը. Ասողիկ կ'անուանէ Մորփիւլիկ՝ «որ բռնացեալ ունէր, կ'ըսէ,

զսահմանս Մաժաքայ և Պոնտոսին Ռմանք ասիկայ նոյն համարիլ կը յօժարին Միհրորազանայ հետ՝ որ Դիոդոր կը յիշառակէ իրը իշխան Ծոփաց։ Նոյն ժամանակը կար մէկը կապագովվիոյ մէջ Աղորենն անունով, որ կը պնդէր թէ ինքը կապագովվիոյ թագաւորին որդին է, և այս կերպով յաջողեցաւ նոյն թագաւորութեան մէկ մասն ձեռք անցունելու, բաժնելով Արխարաթ Զ.ի իրը իր եղբօրը հետ, բայց ասոր վրայ չպատմուիր ասանկ գործ մը։

Գ. թէ ճակատամարտն ուր տեղ եղաւ խորենացին կը գնէ Մ'ծրին՝ Վաղարշակայ աթոռով՝ Մ'ջագետաց Մ'լոգոնիա զաւարին մէջ։ Հետեւարար անկէց բազմութեամբ զօրաց յառաջ բալեց, որ արշաւէ Հայոց արևմտեայ աշխարհն<sup>1</sup>։ Կամ զոնէ նոյն ատեն նուաճեց և անցաւ Եփրատն և յառաջացաւ դէպ ի կողոնիա, (այսինքն այն տեղն կամ աւանն որ ետքն կողոնիա կոչչուեցաւ), Փոքր Հայոց մէջ, անշուշտ այժմու կանգալ աւանն է, ինչպէս կը թուի ինձ, և ոչ նոյն աշխարհին հրախային կողոնիան։ Մ'իայն պէտք է յաւելով՝ որ Ծոփաց թագաւորութիւնը նոյն ժամանակ չվերցուեցաւ, այլ շատ ետքը։

Դ. Յայանի կերպով զիտենք՝ որ նոյն ժամանակ Եփրատայ արևմտեան կողմը գտնուուղ ազգերը չունէին միաբանութեան դաշինք՝ ոչ Մակեդոնացւոց և ոչ Սկիւկեանց հետ, այլ առանձին պետութիւններ էին Հոռովմական հասարակապետութեան վերին ազգեցութեան ներքեւ, Անոնց վրայ ասանկ արշաւանք մը լուութեամբ չէր կրնար անցնիլ, թող թէ « Յայնմ հետէ խաղաղեալ զադարէր երկիրն՝ նուանեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, և Մ'ակեդոնացւոց զադարէր գոռ»։ Մ'ակեդոնացւոց գոռը վաղ զադրած էր, և նոյն պետութիւնն ևս արդէն զաւառ եղած էր Հոռովմայեցւոց։ Կարելի չէր նաև այն՝ թէ «Եւ այս այսպէս կատարեալ, կարգէ զկողմանս Մ'ա-

ժարայ, զՊոնտացիս և զԵզերացիս»։ Վասն զի Մ'ածր ունէր իր թագաւորն Արխարաթ Զ. Փիլոպատոր, նոյնպէս և Պոնտոսի իրը, Մ'իհրուտ Զ. Եւերգետէսը և Եւ ժամանակակից կավից պատմութիւնք չեն նշանակեր ասանկ երեկի գրաւում մը Հայ կամ ուրիշ հզօր թագաւորի մը կողմէ։ մանաւանդ որ նոյն կրկին պետութիւնները տեսեցին տակալին բաւական ժամանակ, և Պոնտոսինը հզօրագոյն ևս եղաւ բիշ մը ետքը։

Այս խորհրդածութիւններէ ետև հարկ է աւելցնել՝ որ արդի քննախօսները՝ Հայաստանի վրայ Վաղարշակ Պարմիկ թագաւորութիւնն անստոյդ կը համարին։ Մ'եր սահմանէն դուրս է ատանկ ծանր ինդրոյ մը մէջ մտնելը։ բայց ինչ որ ըլլայ այն, այս ստոյդ է՝ որ կողոնիոյ ճակատամարտն իր ամէն պարագայներով Փոքր Ասիոյ պատմութեան մէջ տեղ մը զետեղելն՝ անշուշտ դիւրին բան մը չէ։

Այսափ այս նիւթին վրայ համառու, գառնամ տեսնել նաև ինչ ինչ նոր՝ յիշեալ պետաց վրայ։ Ակիզբը դրի Զարէ կամ Զարիադրէսի յաջորդները մինչեւ վերջն՝ որչափ կարելի էր, իսկ հոս պիտի յիշեմ Խորենացւոյն նշանակածն։ Մ'եկնութեամբն Հ. Մ'իբայէլ Վարդապետի՝ Դարեհէն ետև կը գրուի՝ Մ'որփիւլիկ, Մ'իհրորազան, զորոնք մի և նոյն անձ կը համարին ումանք։ Եթէ Խորենացւոյն յիշած «ոմն Մ'որփիւլիկեանն» այլ անձ կարծուի, կամ թերեւս որդի Մ'որփիւլիկէսի, Կ'րլան չորս անձինք 190-140 տարին։

Ծոփաց տէրութիւնը տեսած է 190էն մինչև 70 տարի Քրիստոսէ առաջ. և իր ծանօթ պետերը յիշեր եմ առաջ. հիմայ առաջիկայ հատուածին մէջ պիտի խօսիմ միւս մասին վրայ։

ԳնԲ. Ա. Վ. Աղեքսան. Դիմ.



1. Եփրատին աջակողին, և ասկէ կը հետէի՝ որ արդէն նուանած էր Ծոփաց աշխարհը։